Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«12» դեկտեմբերի 2022 թ. թիվ 175 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022Թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

/առ 25.11.2022/

Ներգնա և արտագնա շարժունություն

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

- 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում «Գործարար վարչարարություն» մասնագիտությամբ առաջին կուրսի *երեք* ուսանող և «Բնապահպանություն և բնօգտագործում» առաջին կուրսի *երկու* ուսանող մասնագիտությամբ ուսանել է Տուշայի համալսարանում, Իտալիա:
- 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների ինստիտուտի *չորս* ասպիրանտ ուսանել է Նեապոլի Ֆեդերիկո II-ի անվան համալսարանում:
- 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում Նեապոլի Ֆեդերիկո II-ի անվան համալսարան *երկու* ասպիրանտ և *մեկ* մագիստրանտ երեք ամիս ուսանել է Էկոկենտրոնում տեղակայված ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում:

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

- Ս.թ. ապրիլի 19-ից 25-ը ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում դասախոսություններ է կարդացել Կրակովի գյուղատնտեսական համալսարանի դասախոս Կարեն Խաչատրյանը էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում: /1 ՊԴ կազմ/
- Ս.թ. մայիսի 10-12-ին WSB ակադեմիայի դասախոս, լոգիստիկայի մասնագետ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոկտոր Ցացեկ Կարցը դասախոսություն է կարդացել ԳԿՄԿ Կառավարման և տնտեսագիտության ամբիոններում էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում: /1 ՊԴ կազմ/
- Ս.թ. հունիսի 1-ից 3-ը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում Մոսկվայի Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի համալսարանական գործընկերության կենտրոնի տնօրեն Աննա Գարմոնովան անցկացրեց վերապատրաստումներ ԳԿՄԿ վարչակազմի համար: /1 ՎԿ/
- Ս.թ. հունիսի 27-ից 30-ը ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում դասախոսություններ է կարդացել Կրակովի մանկավարժական համալսարանի դասախոս Պավել Կրոհը էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում: /1 ՊԴ կազմ/
- Ս.թ. հուլիսի 13-ից 19–ը ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում դասախոսություններ է կարդացել Նեապոլի Ֆեդերիկո II-ի անվան համալսարանի դասախոս Ստեֆանո Ալբանեզեն էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում: /1 ՊԴ կազմ/
- ERASMUS+ «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան – ARMDOCT» կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում ԳԿՄԿ վարչակազմի

հինգ անդամ մասնակցեցին հնգօրյա աշխատաժողովին Լիտվայում ս.թ. մայիսի 2-6-ին: /5 ՎԿ/

- Ս.թ. մայիսի 6-12ը կրթության որակի ապահովման բաժնի պետ, բ.գ.թ., դոցենտ Նարինե Վարդանյանը և «Բնապահպանության և բնօգտագործում» ամբիոնի «Քաղաքային շրջակա միջավայր» առարկայի դասախոս, ծրագրի գիտական համակարգող Գայանե Ներսիսյանը ուսուցողական այցով գտնվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գործընկեր Կրակովի մանկավարժական համալսարանում, Լեհաստան: /1 ՎԿ, 1 ՊԿ/
- Ս.թ. մայիսի 15-20-ը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Լեհաստանի WSB համալսարանի կողմից կազմակերպված միջազգային վերապատրաստման շաբաթին, որին մասնակցում են շուրջ 15 օտարերկրյա համալսարանի 40 ներկայացուցիչ: /1 ՎԿ/
- Ս.թ. մայիսի 23-ից 27-ը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատակազմը՝ ի դեմս տնօրեն Արմեն Սարգսյանի, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն Երջանիկ Զարգարյանի, գիտական քարտուղար Մերի Սարգսյանի, արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանի, արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ Անժելա Պապիկյանի և իրավագիտության ամբիոնի դասախոս Արտյոմ Սեդրակյանի, Տուշայի համալսարանում մասնակցել են «Աշխատակազմի վերապատրաստման միջազգային շաբաթ»-ին, Իտալիա: /6 ՎԿ/
- Ս.թ. մայիսի 27-ից հունիսի 5-ը ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը՝ ի դեմս Լիլիթ Սահակյանի, Գևորգ Տեփանոսյանի, Օլգա Բելյաեվայի և Դավիթ Պիպոյանի դասախոսություններով հանդես են եկել Նեապոլի Ֆեդերիկո II-ի անվան համալսարանում, Իտալիա: /5 ՊԿ/
- Ս.թ. հունիսի 6-ից 10-ը ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոս Մելինե Բեգարյանը դասախոսություններով հանդես է եկել Կրակովի գյուղատնտեսական համալսարանում, Լեհաստան: /1 ՊԿ/
- Ս.թ. հունիսի 14-ից 21-ը ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոս Դավիթ Պիպոյանը դասախոսություններով հանդես է եկել Կրակովի գյուղատնտեսական համալսարանում, Լեհաստան: /1 ՊԿ/
- Ս.թ. հունիսի 14-17-ը Հ կառավարման ամբիոնի վարիչ Կարեն Սարգսյանը և տնտեսագիտության ամբիոնի վարիչի տեղակալ Նարինե Մանուկյանը մասնակցեցին Ռուսաստանի Դաշնության «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի (Вышка) կողմից կազմակերպած «30 տարի միասին» խորագրով Միջազգային գործընկերային շաբաթին: /2 ՎԿ/
- Ս.թ. հուլիսի 10-15-ը <<Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար>> 598232-EPP-1-2018-1-IT-EPPKA2-CBHE-JP կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագի շրջանակներում Վրաստանի Հանրապետությունում կայացած ամառային դպրոցին մասնակցել է «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի 2 դասախոս:/2 ՎԿ/
- Ս.թ. հոկտեմբերի 16-20-ը ԳԿՄԿ դեկան Ատոմ Մխիթարյանը մասնակցել է Կրթության քաղաքականության կենտրոնների ցանցի գիտաժողովին և գլխավոր անսամբլեային:/1 ՎԿ/
- Ս.թ. նոյեմբերի 1-4-ը Ռուսաստանի Նիժնի Նովգորոդ քաղաքում՝ Ն. Լոբաչևսկու անվան ազգային հետազոտական համալսարանում, կայացավ «Գիտությունն առանց սահմանների» խորագրով ԱՊՀ պետությունների երիտասարդ գիտնականների համաժողովը, որին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնից մասնակցում էր Կենտրոնի գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ Մերի Սարգսյանը: /1 ՊԿ/
- Էրազմուս+ ARMDOCT Կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում ս/թ նոյեմբերի 14-17-ը Իտալիայի Տերամոյի համալսարանում անցկացվեց ARMDOCT ծրագրի աշխատաժողովը, որին նաև մասնակցեց ԳԿՄԿ աշխատանքային խումբը: /6 ՎԿ/
- Ս.թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Արմեն Սարգսյանը և տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս, Հայաստանում KiVO մրցույթի համակարգող Նարինե Մանուկյանը մասնակցեցին «Ռոսատոմ» պետական կորպորացիայի աջակցությամբ կազմակերպված «Կրթություն X. որպես կայուն ապագայի կատալիզատոր» Global Impact համաժողովին, որը տեղի ունեցավ

Նիժնի Նովգորոդում:/ 2 ՎԿ/

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

ԳԱՑ ցուցանիշ 6.1. Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը

	2016	2017	2018	2019	2020*	2021	2022
Պայմանագրերի թիվը	18	25	24	33	40	51	59
Գործուղումների թիվը ըստ գործընկերների	6	11	15	37	0*	5	33

ԳԱՑ ցուցանիշ 6.2 Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ

	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ	9	12	6	13	0*	3	5

Յուցանիշ 6.3 Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվը

	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտագնա ուսանողների թիվ	8	2	14	8	0*	3**	մագ՝ 5 ասպ՝ 4
Ներգնա օտարերկրյա ուսանողների թիվ				2	0*	0	մագ՝ 1 ասպ՝ 2
ՎԻՐՏՈՒԱԼ/ԱՌՑԱՆՑ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ							
ԳԿՄԿ → Ռուսաստանի ազգային հետազոտական համալսարանի բարձրագույն տնտեսագիտական դպրոց						11	3

*Կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված՝ 2020թ. շարժունության բոլոր ծրագրերը կասեցվել են:

Բաժնի կողմից մասնակցած միջոցառումներ

● 2022թ. հունվարի 19-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է «Դոկտորական դպրոցների կազմակերպումը. հիմնախնդիրներ, վերլուծություններ և հեռանկարներ ֆրանսիական փորձից» խորագրով վեբինարին:

● 2022թ. հունվարի 27-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը ԱՓՇԱՏԿ-ի հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստին՝ որպես հոգաբարձուների խորհրդի անդամ:
● 2022թ. փետրվարի 3-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է «The challenge of sustainable mobility: the launch of the Green Erasmus survey report» խորագրով վեբինարին:
● 2022թ. փետրվարի 4-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է «Դոկտորական դպրոցների կազմակերպումը Լատվիայում. ներկա վիճակը և նախատեսվող բարեփոխումները» խորագրով վեբինարին:
● 2022թ. հունիսի 15-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է առցանց տեղեկատվական հանդիպմանը Էրազմուս+ Վիրտուալ փոխանակումներով հետաքրքրված կազմակերպությունների համար:
● 2022թ. հոկտեմբերի 20-ին բաժինը մասնակցել է Միանվագ ֆինանսավորումը «Հորիզոն Եվրոպա»-ի (ՀԵ) շրջանակներում՝ ինչպե՞ս է այն գործում և ինչպե՞ս կազմել հայտադիմումը» թեմայով առցանց վեբինարին:
● 2022թ. նոյեմբերի 8-ին կազմակերպվեց հանդիպում բուհերի միջազգային կապերի բաժինների ներկայացուցիչների հետ, որին մասնակցեց բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը:
● 2022թ. նոյեմբերի 8-ին, 9-ին և 10-ին բաժինը մասնակցել է Erasmus+ համաշխարհային տեղեկատվական սեմինարներին:
● 2022թ. նոյեմբերի 22-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է «Դասավանդման և ուսումնառության մեթոդներ» թեմատիկ հանդիպմանը:

Բաժնի կողմից կազմակերպած միջոցառումներ

●2022թ. հունվարի 27-ին անցկացվել է տեղեկատվական հանդիպում Տուշայի համալսարան մեկնող ուսանողների հետ, որտեղ քննարկվել են կեցության և ներքին հաղորդակցության հարցերը:
●2022թ. ապրիլի 13-ին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում BEL HUAWEI TECHNOLOGIES միջազգային ընկերության Բելառուսի ներկայացուցիչների հետ:
●2022թ. մայիսի 3-ին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում Ստավրոպոլի Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարանի համաշխարհային պատմության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ Իգոր Կրյուչկովի հետ: Հանդիպման նպատակն էր ամրապնդել մեկնարկած միջբուհական համագործակցության կապերը Կենտրոնի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարանի միջև «Անդրկովկասյան հետազոտությունների կենտրոն» ստեղծելու հարցը, ինչպես նաև քննարկվեց «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ կրկնակի դիպլոմի մագիստրոսական կրթական ծրագրի ներդրման աշխատանքների կազմակերպումը:
●2022թ. մայիսի 4-ին Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը հյուրընկալեց Բրյուսելի Vrije համալսարանի (VUB) միջազգային փորձագետին կրթության և գիտության ոլորտում միջազգայնացման գործընթացը, ինչպես նաև հետագա համագործակցության հեռանկարները քննարկելու նպատակով:
●2022թ. հունիսի 2-ին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում ԳԿՄԿ վարչակազմի անդամների և Մոսկվայի տնտեսագիտության բարձրագույն դպրոցի համալսարանական գործընկերության կենտրոնի տնօրեն Աննա Գարմոնովայի հետ:
●2022թ. հունիսի 3-ին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի վարչակազմն ընդունեց Սանկտ Պետերբուրգի Եվրոպական համալսարանի պատվիրակությանը:

●2022թ. ապրիլի 23-ից մայիս 7-ը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները՝ ի դեմս Կենտրոնի գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ Մերի Սարգսյանը, Դեղագիտության ամբիոնի վարիչ. ք.գ.թ. Սյուզաննա Թոսունյանը, Մոլեկուլային և բջջային կենսաբանության ամբիոնի դասախոս, կ.գ.թ. Գոհար Ցականովան, Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի դասախոս ֆ.մ.գ.թ. Սերգեյ Աբրահամյանը մասնակցեցին երկշաբաթյա վերապատրաստման դասընթացի՝ առկա և հեռավար ձևաչափերով: Վերապատրաստման դասընթացը մշակվել էր Հայաստանի գիտությունների ու տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) կողմից և իրականացվում էր Բրիտանական խորհրդի «Ստեղծարար Միտք» (SciNova) նախաձեռնության շրջանակներում: Ծրագրի գործընկերն էր Մեծ Բրիտանիայի Ասթոն (Aston) համալսարանը:

●Ս.թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ Erasmus Days միջոցառման շրջանակներում կազմակերպվեց Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին նվիրված տեղեկատվական հանդիպում, որը նախատեսված էր «Գործարար վարչարարություն» և «Իրավագիտություն» մասնագիտությամբ սովորող 1-ին կուրսի ուսանողների համար:

Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր

Կենտրոնը մասնակցում է `

- **«Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» (MENVIPRO) Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրին:** Ծրագրի ավարտական տարում ձեռք են բերվել անալիտիկ կշեռքներ, կազմակերպվել է ծրագրի եզրափակիչ համաժողովը՝ ավելի քան **50** մասնակիցներով Իտալիայից, Գերմանիայից, Պորտուգալիայից, Վրաստանից և Հայաստանից և **26** բանախոսներ՝ այդ թվում ներկայացուցիչներ ՀԱԲԼԾԿ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնիից, Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնից, Կադաստրի կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից և Մեծամորի ատոմակայանից քննարկեցին հետբուհական նորարարական բնապահպանական կրթության զարգացման ներկա պահանջները և հեռանկարները:
- **«Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT)** Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրին: ԱՐՄԴՈԿՏ ծրագրի շրջանակներում մայիսի 3-5 կազմակերպվել է այցելություն Վիլնյուսի համալսարան, որտեղ ուսումնասիրվել է դոկտորական կրթության կազմակերպման եվրոպական /Լիտվայի/ փորձը, ներհամալսարանական կանոնակարգերը, ինչպես նաև ներկայացվել է ասպիրանտական կրթության կազմակերպման առանձնահատկությունները ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում: Մայիս և հունիս ամիսներին տեղի են ունեցել ծրագրի համակարգող խմբի հանդիպում-քննարկումները՝ Հայաստանի պետական բժշկական համալսարանում և ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում, որտեղ քննարկվել են ծրագրի շրջանակներում կայանալիք առաջիկա միջոցառումները, դրանց բովանդակությունը: Համատեղ դոկտորական դպրոցի կառավարման խնդիրները մանրամասն քննարկվել են ԳԿՄԿ – Եվրասիա համալսարան առցանց հանդիպումների ընթացքում: Նոյեմբերին կազմակերպվել է այցելություն Իտալիայի Տերամոյի համալսարան, որտեղ ուսումնասիրվել է դոկտորական դպրոցների ստեղծման, կայացման ու

գործունեության եվրոպական /Իտալիայի/ փորձը: **Ծրագրի շրջանակներում հիմնվել է մեդիա լաբորատորիա:**

- **«Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE)** Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրին

  Այս ծրագրի հիմնական նպատակն է նվազեցնել ակվակուլտուրայի և ձկնային տնտեսությունների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ակվակուլտուրայի և ձկնային տնտեսությունների մագիստրոսական այնպիսի ծրագրերի ստեղծմամբ և զարգացմամբ Հայաստանում և Ուկրաինայում, որոնք համարժեք կլինեն եվրոպական նմանատիպ առաջատար ծրագրերին, կարձագանքեն ազգային և տարածաշրջանային կարիքներին ու կամրապնդեն համալսարան-ձեռնարկություն-հետազոտություն համագործակցությունը («կրթությունից մինչև էկոլոգիա» հայեցակարգ): AFISHE ծրագրի շնորհիվ կստեղծվի ակվակուլտուրայի և ձկնային տնտեսությունների ոլորտային ցանց Հայաստանի, Ուկրաինայի և եվրոպական երկրների միջև: Այն կծառայի որպես հարթակ՝ ակվակուլտուրայի և ձկնային տնտեսությունների ոլորտներում միասնական կրթական և հետազոտական գործունեություն իրականացնելու համար, ինչը կզարգացնի էկոլոգիայի վրա հիմնված մոտեցումներն և գործունեությունը՝ համապատասխան ՄԱԿ-ի կայուն Զարգացման նպատակներին և ԵՄ Կանաչ Գործարքին: **ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի աշխատանքային խումբը մշակելու է նոր մագիստրոսական կրթական ծրագիր՝ ՀԱԱՀ-ի համատեղ ՀՀ ԳԱԱ կենդանաբանություն և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հենքի վրա՝ այսպիսով խթանելով հետազոտահեն կրթությունը ՀՀ-ում: Ծրագրի շրջանակներում նաև ստեղծվելու է գիտակրթական լաբորատորիա և հետազոտահեն կրթության իրականացման համար անհրաժեշտ այլ ենթակառուցվածքներ:**

Կնքված նոր հուշագրեր և համաձայնագրեր

➢ ***Միջազգային հուշագրեր և համաձայնագրեր***

- Կնքվել է համագործակցության համաձայնագիր Նիտրայում Սլովակիայի գյուղատնտեսական համալսարանի հետ
- Կնքվել է ցանցային համագործակցության պայմանագիր՝ առցանց դասընթացների միջոցով կրթական ծրագրերի իրականացման մասին Ռուսաստանի համալսարանի բարձրագույն տնտեսագիտական դպրոցի հետ
- Կնքվել է միջ-ինստիտուցիոնալ համաձայնագիր Լյուվենի կաթոլիկ համալսարանի հետ, Բելգիա
- Կնքվել է միջ-ինստիտուցիոնալ համաձայնագիր Օսիյեկի համալսարանի հետ, Խորվաթիա
- Կնքվել է փոխըմբռնման հուշագիր UNINETTUNO միջազգային հեռուստատեսային համալսարանի հետ:

➢ ***<u>Ներպետական հուշագրեր, պայմանագրեր և համաձայնագրեր</u>***

- Կնքվել է փոխըմբռնման հուշագիր Ինստիգեյթ ԳՀԶԿ-ի հետ
- Կնքվել է «SciNova» ծրագրի իրականացման համաձայնագիր Հայաստանի գիտության եվ տեխնոլոգիաների հիմնադրամի հետ (FAST)
- Կնքվել է համագործակցության հուշագիր Հայաստանի Եվրոպական համալսարանի հետ

Մշակված փաստաթղթեր ՝

- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության գործնական ուղեցույց ԳԿՄԿ ներգնա ուսանողների համար
- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում Տուշայի համալսարան մեկնող ուսանողների համար ուղեցույց
- Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի ասպիրանտ մասնակիցների հարցման ընթացակարգ
- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի աշխատողների օտարերկրյա գործուղումների ձևակերպելու կանոնակարգ /համամշակում/
- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ներառական կրթության հայեցակարգ

Հաշվետու տարում բաժինը՝

- աջակցություն է ցուցաբերել Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ից Իտալիա մեկնող ուսանողների (մագիստրատուրա և ասպիրանտուրա) երկարատև վիզաների ձեռք բերման գործընթացին, /ընդհանուր թիվը՝ 9/,
- տեղեկատվություն է տրամադրել տարբեր դեսպանատների մասին ԿՈՎԻԴ19-ի սահմանափակումների վերաբերյալ,
- խորհրդատվություն է տրամադրել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատակիցներին ԿՈՎԻԴ19-ի իրավիճակից ելնելով վիզաների ձեռքբերման գործընթացի մասին,
- կատարվել է 11 դիպլոմի միջազգային վերիֆիկացիա,
- հյուրընկալել է Իտալիայից ժամանած դասախոսներ, կազմակերպել նրանց դասախոսությունները առկա և առցանց տիրույթում, կատարել համաժամանակյա թարգմանություններ, հոգ տարել դասախոսների ազատ ժամանցի կազմակերպման մասին:

Սույն տարում Erasmus+ ֆինանսավորման համար ներկայացվել են հետևյալ հայտերը՝

Կարողությունների զարգացման ծրագրեր՝

- AFISHE
- CANDELA (CENTRAL ASIAN NETWORK ON DIGITALIZATION OF EDUCATION IN LIBRARY AND INFORMATION SCIENCES)

Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրեր՝

- Լիլի համալսարան, Ֆրանսիա
- Բոլոնիայի համալսարան, Իտալիա
- Տուշայի համալսարան, Իտալիա
- WSB ակադեմիա, Լեհաստան
- Մալագայի համալսարան, Իսպանիա
- Վելիկո Թառնովո համալսարան, Բուլղարիա
- Փառ համալսարան քոլեջ, Խորվաթիա
- Օսիյեկի համալսարան, Խորվաթիա

Ռազմավարական նպատակ	Հիմնական գործողություն	Արդյունավետության հիմնական ցուցանիշ /KPI/	Վերջնարդյունք	2022թ արդյունքներ
Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցության ընդլայնում, նոր կապերի ստեղծում և զարգացում, համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնում	Ավելացնել արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցությունը	Կնքվող միջազգային համագործակցության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի թիվ	տարեկան **5** միջազգային համագործակցության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի կնքում	Կնքվել է **8** միջազգային համագործակցության և արտաքին համագործակցության համաձայնագիր:
	Մշակել միջազգային համագործակցային ծրագրերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման ճկուն և հանրամատչելի ուղիներ	Վեբկայքի առաջխաղացմանը խթանող լեզուների կիրառման թիվ Վեբկայքի այցելուների թիվ	Վեբկայքի այցելուների թվի աճ՝ տարեկան 1%	Եռալեզու վեբկայք 2021թ.՝ 58523 2022 թ.՝ 56941 Գրանցվել է այցելուների նվազում մոտ մեկ տոկոսով Միջազգայնացման պատասխանատուներին ուղարկվել է 20-ից ավել տեղեկատվական նամակ՝ տարբեր իրադարձությունների, ֆինանսավորման գործիքների և այլնի մասին:
	Ամփոփել գործունեության արդյունքները յուրաքանչյուր տարվա ավարտին՝ ըստ ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարության խնդիրների և	Բաժնի հաշվետվություն	ԳԱՑ ցուցանիշներ	Տես՝ բաժնի հաշվետվություն

	մշակել համապատասխան միջոցառումների ծրագիր լավագույն փորձի տարածման և թերությունների շտկման նպատակով			
Արտասահմանյան հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շարունակականության ապահովում	Հավաքագրել և ԳԿՄԿ մասնագիտական ամբիոններին տարածել տեղեկատվություն գործող ծրագրերի, գիտական կոնֆերանսների, գիտական հոդվածների հրատարակումների հնարավորությունների վերաբերյալ	Օտար լեզուներով հրապարակումների թիվ (տեղական և միջազգային ամսագրերում) Elsevier's Scopus database-ի կողմից ինդեքսավորված ակադեմիական ամսագրերում հրապարակված հոդվածների թիվ	տարեկան 1% աճ	Հասանելի չէ
	Բարելավել ասպիրանտների / պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունները միջազգային հրապարակումներ ունենալու համար	Վերապատրաստումների թիվ Օտար լեզուներով հրապարակումների թիվ	Վերապատրաստված դասախոսների թիվ	***24***դասախոս մասնակցել է միջազգային վերապատրաստումներին և 4 դասախոս՝ «SciNova» ծրագրին
	Նախաձեռնել համատեղ հետազոտական նախագծեր տարբեր հետազոտական պատուհանների և հիմնադրամների միջոցով (Jean Monet, Horizon2020 և այլն)	Ընթացիկ համատեղ հետազոտական ծրագրերի թիվ	Հետազոտական ծրագրերի դիվերսիֆիկացում	Առկա չէ
Ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմերի փորձի, գիտելիքների, հմտությունների ու	Ավելացնել ԳԿՄԿ միջազգային կրեդիտային շարժունակության ծրագրերի թիվը՝ դրանով իսկ նպաստելով ԳԿՄԿ ուսանողական,	Փորձի փոխանակման համար արտասահման ուղարկվող և արտասահմանից ժամանող ուսանողական,	տարեկան 3 միջազգային կրեդիտային շարժունակության ծրագիր	Տվյալ պահի դրությամբ շահել է ***4***կրեդիտային շարժունակության ծրագիր և ***մեկ*** կարողությունների զարգացման ծրագիր

կարողությունների փորձի փոխանակման գործընթացի ընդլայնում	պրոֆեսորադասախոսական վարչական համակազմերի շարժունակությանը	պրոֆեսորադասախոսական վարչական համակազմերի թիվ		
	Մշակել միջազգային կրեդիտային շարժունությանը վերաբերող համապատասխան փաստաթղթեր և ընթացակարգեր	Մշակված փաստաթղթերի թիվ		Մշակվել է ***հինգ*** փաստաթուղթ /մանրամասները՝ բաժնի հաշվետվություն /
	Կազմակերպել տեղեկատվական սեմինարներ	Կազմակերպված իրադարձությունների թիվ		Կազմակերպվել է ***հինգ*** տեղեկատվական սեմինար
Կենտրոնի բոլոր մասնագիտացումներում դասավանդվող մասնագիտական դասընթացների օտարալեզու դասախոսությունների պրակտիկայի ընդլայնում	Ներդնել օտար լեզուներով դասավանդվող ծրագրեր և առանձին դասընթացներ՝ շեշտադրում կատարելով անգլերենի վրա	Օտար լեզուներով դասընթացներին մասնակցող ուսանողների թիվ, Օտար լեզուներով դասավանդվող դասընթացների թիվ Կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի թիվ	Օտար լեզուներով դասընթացների տարեկան 1% աճ	Վիրտուալ շարժունության մասնակից ուսանողների թիվ՝ ***3*** 2022-2023 ուս տարում օտար լեզվով դասավանդվող դասընթաց՝ ***1*** Կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի թիվ՝ ***4*** Միջազգային գիտաժողովի մասնակիցների թիվ՝ ***50***

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժին պետ՝ Ա. Հարությունյան